

ԿԻՍԱՍՅԱԿԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՕԳՈՍՏՈՍ

1. 2013-2014 ուստարվա կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություն:
2. 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

ՄԵՊՏԵՄԲԵՐ

1. 2014-2015 ուստարվա արտադրական (մանկավարժական) պրակտիկաների ծրագրերի հաստատում:
2. Ինքնուրույն աշխատանքների դրվածքը ֆակուլտետում:
3. Ընթացիկ հարցեր:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1. 2014-2015 ուստարվա 1-ին կիսամյակի պարտքերի մարման ամփոփում:
2. Ընթացիկ հարցեր:

ՆՈՅԵՄԲԵՐ

1. Օտար լեզուների ամբիոնի վարիչի հնգամյա գործունեության հաշվետվություն:
2. Ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1. Քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների վիճակը:
2. Մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

ՀՈՒՆՎԱՐ

1. . Առաջին միջանկյալ քննությունների արդյունքների ամփոփում::
2. 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

ՆԻՍՏ

Նիստին մասնակցում էին գիտամեթոդական խորհրդի 11 անդամներից 11-ը և ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

- Օրակարգ** - 1. 2013-2014 ուստարվա կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություն:
- 2. 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում:
- 3. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին բանասիրական ֆակուլտետի դեկանի՝ 2013-2014 ուստարվա կատարած աշխատանքային հաշվետվությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում բանասիրական ֆակուլտետը բակալավրիատի կրթության ծրագրեր է իրականացրել հետևյալ մասնագիտությունների գծով.

- «Հայոց լեզու և գրականություն» - առկա և հեռակա համակարգեր
- «Ռուսաց լեզու և գրականություն» - առկա և հեռակա համակարգեր
- «Անգլերեն լեզու և գրականություն» - առկա և հեռակա համակարգեր
- «Լրագրություն» - առկա և հեռակա համակարգեր
- «Թարգմանչական գործ» - առկա համակարգ

Մագիստրատուրայի կրթության ծրագրեր իրականացվել են հետևյալ մասնագիտությունների գծով.

- «Հայոց լեզու և գրականություն» - առկա և հեռակա համակարգեր
- «Ռուսաց լեզու և գրականություն» - առկա համակարգ
- «Անգլերեն լեզու և գրականություն» - առկա համակարգ

Բանասիրական ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է ինստիտուտի և ֆակուլտետի կանոնադրությունների հիման վրա՝ հենվելով ՀՀ կրթության մասին օրենքի, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից ստացած հրահանգների ու որոշումների, ինչպես նաև համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, ուսումնական վարչության և գիտական մասի որոշումների հիման վրա:

Ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդն աշխատում է ուսումնական գծով պրոռեկտորի կողմից նախապես հաստատված աշխատանքային պլանով՝ ֆակուլտետը սպասարկող բոլոր ամբիոնների համագործակցությամբ:

Բակալավրիատի առկա ուսուցման համակարգի առաջադիմությունը կազմել է 93,2, իսկ երկրորդ կիսամյակինը՝ 95,8 տոկոս: Հեռակա համակարգում այդ ցուցանիշները եղել են համապատասխանաբար 76,5 և 79,5 տոկոս:

Մագիստրատուրայում առաջադիմությունը ավելի բարձր է՝ 98 և 98,5 տոկոս:

Ներկայացնեմ ավարտական որակավորման քննությունների արդյունքները.

Առկա ուսուցում (բակալավրիատ).

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն

h/ h	Առարկան	Ուս. քան.	անբավա բար		բավարար (C-, C, C+)		լավ (B-, B, B+)		գերազանց (A-, A, A+)		չն	
			քան	%	քանակ ը	%	քան ակը	%	քան ակը	%	քան ակը	%
1.	Հայոց լեզու, ՀԳՊ	24	3	12,5	1+4+2	29,2	3+2+3	33,3	0+0+6	25,0	0	0
2.	Մանկ., ՀԼԴՄ ՀԳԴՄ	24	1	4,2	6+3+0	37,5	2+0+0	8,3	4+3+5	50,0	0	0

«Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտություն

h/ h	Առարկան	Ուս. քան.	անբավա բար		բավարար (C-, C, C+)		լավ (B-, B, B+)		գերազանց (A-, A, A+)		չն	
			քան	%	քանակ ը	%	քան ակը	%	քան ակը	%	քան ակը	%
1.	Ռուսաց լեզու, ՌԳՊ	23	0	0	8+5+1	60,9	0+2+0	8,7	0+4+3	30,4	0	0
2.	Մանկ., ՌԼԴՄ ՌԳԴՄ	23	0	0	0+6+2	34,8	0+4+2	26,1	1+3+4	34,8	1	4,3

«Անգլերեն լեզու» մասնագիտություն

h/ h	Առարկան	Ուս. քան.	անբավա բար		բավարար (C-, C, C+)		լավ (B-, B, B+)		գերազանց (A-, A, A+)		չն	
			քան	%	քանակ ը	%	քան ակը	%	քան ակը	%	քան ակը	%
1.	Անգլերեն լեզու	35	0	0	2+1+0	8,6	2+6+0	22,8	2+6+16	68,6	0	0
2.	Մանկավարժ., ԱԼԴՄ	35	3	8,6	0+4+1	14,3	2+4+5	31,4	2+3+11	45,7	0	0

«Թարգմանչական գործ» մասնագիտություն

h/ h	Առարկան	Ուս. քան.	անբավա բար		բավարար (C-, C, C+)		լավ (B-, B, B+)		գերազանց (A-, A, A+)		չն	
			քան	%	քանակ ը	%	քան ակը	%	քան ակը	%	քան ակը	%

1.	Թարգմանություն (տեսություն և պատմութ.)	13	0	0	0+2+0	15,4	0+1+0	7,7	2+1+7	76,9	0	0
----	--	----	---	---	-------	------	-------	-----	-------	------	---	---

Առկա ուսուցում (մագիստրատուրա)

«Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտություն

հ/ h	Առարկան	Ուս. քան.	անբավա բար		բավարար (C-, C, C+)		լավ (B-, B, B+)		գերազանց (A-, A, A+)		չն	
			քան	%	քանակ ը	%	քան ակը	%	քան ակը	%	քան ակը	%
1.	Ավարտական աշխատանք	18	0	0	0+1+0	5,6	0	0	1+7+9	94,4	0	0

«Անգլերեն լեզու» մասնագիտություն

հ/ h	Առարկան	Ուս. քան.	անբավա բար		բավարար (C-, C, C+)		լավ (B-, B, B+)		գերազանց (A-, A, A+)		չն	
			քան	%	քանակ ը	%	քան ակը	%	քան ակը	%	քան ակը	%
1.	Ավարտական աշխատանք	22	0	0	0+1+0	4,5	0+1+0	4,5	1+6+13	91,0	0	0

Հեռակա ուսուցում (բակալավրիատ)

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն

հ/հ	Առարկան	Ուս. քան.	«2»		«3»		«4»		«5»		ՀՆ	
			քան	%	քանակ ը	%	քան ակը	%	քան ակը	%	քան ակը	%
1.	Հայոց լեզու, ՀԳՊ	27	8	29,6	15	55,6	4	14,8	0	0	0	0
2.	Մանկ., ՀԼԴՄ ՀԳԴՄ	27	5	18,6	10	37,0	4	14,8	5	18,5	3	11,1

«Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտություն

հ/հ	Առարկան	Ուս. քան.	«2»		«3»		«4»		«5»		ՀՆ	
			քան	%	քանակ ը	%	քան ակը	%	քան ակը	%	քան ակը	%
1.	Ռուսաց լեզու, ՌԳՊ	31	3	9,7	21	67,7	6	19,4	1	3,2	0	0
2.	Մանկ., ՌԼԴՄ ՌԳԴՄ	31	0	0	24	77,5	4	12,9	2	6,4	1	3,2

«Անգլերեն լեզու» մասնագիտություն

հ/ հ	Առարկան	Ուս. քան.	«2»		«3»		«4»		«5»		ՀՆ	
			քան	%	քանակ ը	%	քան ակը	%	քան ակը	%	քան ակը	%
1.	Անգլերեն լեզու	7	0	0	5	71,4	1	14,3	1	14,3	0	0
2.	Մանկավարժ., ԱԼԴՄ	7	0	0	6	85,7	1	14,3	0	0	0	0

2013-2014 ուսումնական տարում մագիստրատուրայի ծրագրով առկա համակարգում ուսուցումն ավարտեցին 40 ուսանողներ (18-ը՝ «Ռուսաց լեզու և գրականություն», 22-ը՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություններով): Նրանցից 26-ը բուհն ավարտեցին գերազանց առաջադիմությամբ (13-ը՝ «Ռուսաց լեզու և գրականություն», 13-ը՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություններով):

Հունվարին ֆակուլտետը որնեցավ առաջին շրջանավարտները մագիստրատուրայի ուսուցման հեռակա համակարգում՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ: Ավարտեցին վեց ուսանողներ:

Բակալավրիատի կրթական ծրագրով ուսուցումն ավարտեցին 160 ուսանողներ (95-ը՝ առկա, 65-ը՝ հեռակա ուսուցմամբ): Նրանցից 34-ը բուհն ավարտեցին գերազանց առաջադիմությամբ (33-ը՝ առկա, 1-ը՝ հեռակա ուսուցմամբ):

Պետական քննությունների նախագահներ Հ.Մաթևոսյանը, Ա.Զաքարյանը, Մ.Դալալյանը գոհ էին բակալավրիատի ու մագիստրատուրայի ուսանողների և՛ ավարտական աշխատանքներից, և՛ բանավոր պատասխաններից: «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության պետական քննական հանձնաժողովի նախագահ Ա.Զաքարյանը իր հաշվետվությունում հատկապես առանձնացրել է մագիստրատուրայի ուսանողների ավարտական աշխատանքների բարձր որակը: Նա նաև դժգոհություն է հայտնել բակալավրիատի որոշ ուսանողների՝ «Ռուս գրականություն» առարկայի պատրաստվածության մակարդակից: Նախագահների կողմից արվել են նաև դիտողություններ, առաջարկություններ, որոնք անպայման հաշվի կառնվեն հաջորդ տարիների պետական քննությունների կազմակերպման ընթացքում:

Նշեմ նաև, որ հաշվետու ժամանակահատվածում առկա ուսուցման համակարգի մեկ ուսանող անբավարար առաջադիմության պատճառով հեռացվել է բուհից (Ասլանյան Լիլիա - «Թարգմանչական գործ», 3-րդ կուրս):

Ավելացնեն, որ հետևողական ենք հեռակա ուսուցման ուսանողների հաճախումների հարցում: Քննաշրջանի ընթացքում կատարվում են ամենօրյա ստուգումներ, որոնց նպատակն է հնարավորինս պակասեցնել անհարգելի բացակայությունների քանակը: Խիստ միջոցներ են կիրառվում բացակայող ուսանողների նկատմամբ: Հաշվետու ժամանակաշրջանում հեռակա համակարգի երկու ուսանողներ բացակայությունների համար հեռացվել են ինստիտուտից (Մարտիրոսյան Անահիտ – «Հայոց լեզու և գրականություն», 4-րդ կուրս, Զուրաբյան Արգիշտի - «Անգլերեն լեզու և գրականություն», 1-ին կուրս):

Բարձրակարգ կրթություն ստանալու համար բուհի ղեկավարության կողմից ստեղծվում են բոլոր անհրաժեշտ պայմանները: Ուսանողները ապահովվում են արդյունավետ կրթություն ստանալու բոլոր նախապայմաններով (դասախոսական տեքստեր, հարցաշարեր և այլն):

Քննաշրջանների արդյունքները քննարկվել են ֆակուլտետի գիտաուսումնամեթոդական խորհրդում ու համապատասխան ամբիոններում, և առաջիկայում ևս կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ՝ վիճակը էլ ավելի բարելավելու ուղղությամբ:

2013 - 2014 ուստարում մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգում՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ ընդունվեց վեց ուսանող, իսկ նախորդ ուստարում՝ քսաներեք: Հիմնական պատճառն այն է, որ ուսանողները ցանկանում են սովորել այլ մասնագիտություններով ևս, սակայն հեռակա համակարգով մագիստրատուրայի ուսուցման այլ մասնագիտությամբ հնարավորություն նախարարությունից չի տրվում: Չմոռանանք, որ սովորողները հնարավորություն ունեն կրթությունը համատեղելու աշխատանքի հետ, ինչի հնարավորությունը չկա առկա ուսուցման ժամանակ: Շրջանավարտների հետ անցկացված հարցումները ցույց են տալիս, որ հեռակա ուսուցմամբ մագիստրոսական կրթություն ստանալու ցանկություն ունեցողների թիվը մեծ է հատկապես «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնում:

Ժամանակը ցույց տվեց, որ ընթացիկ քննությունների համակարգի ներդրումը իրեն լիովին արդարացրեց: Հատկապես լավ սովորող ուսանողների համար այն լրացուցիչ օգնություն և խթան է՝ կիսամյակային քննություններին լավագույն նախապատրաստվելու և բարձր արդյունքներ գրանցելու գործում:

Բավարար մակարդակով են կազմակերպվել արտադրական պրակտիկաները: Բակլավրիատի ուսանողների մանկավարժական պրակտիկայի համար ընտրվել են՝ «Հայոց լեզու և գրականություն» բաժին՝ թիվ 1, 2, 3 դպրոցները, «Ռուսաց լեզու և գրականություն» բաժին՝ թիվ 1, 2, 3, 4 դպրոցները, իսկ «Անգլերեն լեզու» բաժին՝ թիվ 1, 3, 4 10, 20 դպրոցները և ՎՊՀ հենակետային վարժարանը, որտեղ կան մասնագիտությամբ որակյալ ուսուցիչներ: «Լրագրություն» մասնագիտության ուսանողները արտադրական պրակտիկան անցկացրել են «Միգ-TV» և «Լոռի» հեռուստաստուդիաներում, «Լոռու մարզ» թերթի խմբագրությունում: «Թարգմանչական գործ» մասնագիտության ուսանողները պրակտիկան անցկացրել են «Լոռի» հեռուստաստուդիայում, ՎՊՀ խմբագրությունում, ՎՊՀ գիտկաբինետում, Կերպարվեստի թանգարանում: Արտադրական պրակտիկայից առաջ անպայման կազմակերպում ենք խորհրդակցություններ համապատասխան կուրսերի ուսանողների, մեթոդիստների, մանկավարժների և հոգեբանների մասնակցությամբ:

Ինչպես և նախորդ տարիներին, մագիստրատուրայի բաժնի ուսանողների արտադրական պրակտիկան այս ուստարում ևս կազմակերպվեց բուհում: Փորձը ցույց է տալիս, որ մեր ֆակուլտետի

մագիստրատուրայի մի շարք ուսանողներ 2-րդ կուրսում արդեն ի վիճակի են բակալավրիատում դասավանդելու:

2012 - 2013 ուստարվանից բակալավրիատի հեռակա համակարգում ներդրված ուսուցման կրեդիտային, գնահատման բազմագործոնային համակարգերը: իրենց արդարացրին: Նշեմ, որ մագիստրատուրայի հեռակա համակարգում այն գործում է բացման օրվանից:

Դեկանատը հետևողական է վարձավճարները ժամանակին հավաքագրելու գործում: Բայց պետք է նշեմ, որ այս հարցում օբյեկտիվ պատճառներով երբեմն ծագում են դժվարություններ՝ հասարակության մի զգալի մասի սոցիալապես անապահով վիճակի հետ կապված: Նման դեպքերում աշխատում ենք գտնել երկկողմանի շահավետ տարբերակներ: Այս հարցում զգալի օգնություն էր, այսպես կոչված, սոցիալաթերապիայի միջոցով վարձավճարների մուծումը:

Ակնհայտ են ֆակուլտետի հաջողությունները գիտության բնագավառում: Հաշվետու ժամանակաշրջանում լույս են տեսել ֆակուլտետը սպասարկող ամբիոնների աշխատակիցների 3 աշխատություններ, 1 մեթոդական ձեռնարկ՝

1. Թ.Թադևոսյան, Բանահյուսական արքետիպերի իմաստաբանական գուգահեռներ. ռուսական բիլինաներ և օսական նարթական էպոս, Վլադիվալկազ, 2013 (143 էջ) (ռուսերեն):
1. Տ.Դանիելյան, «Ռադիոյի արդի փուլի զարգացման օրինաչափությունները և միտումները Հայաստանի Հանրապետությունում», Վանաձոր, 2014 (166 էջ):
2. Ա.Պապոյան, Անգլերեն ընթերցանության ուսուցման մեթոդական մոտեցումներն ավագ դպրոցում, Վանաձոր, 2013 (80 էջ):
4. Գ.Սատինյան, Practice English Through Proverbs, Երևան, 2013 (116 էջ):

Ամբիոնների աշխատակիցները լույս են ընծայել նաև մի քանի տասնյակ հոդվածներ. այդ թվում՝ հայոց լեզվի ամբիոնը՝ 12, գրականության ամբիոնը՝ 30, օտար լեզուների ամբիոնը՝ 14, ռուսաց լեզվի ամբիոնը՝ 4:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետը կազմակերպել է մի քանի միջոցառումներ՝ քննարկումներ (Հր.Սարուխանի «Ի տրիտուր» ժողովածուի քննարկում և հանդիպում հեղինակի հետ (գրականության ամբիոն, 13.09.2013), «Մեր մեծերը» շարքից՝ Արշակ Չոպանյան (գրականության ամբիոն, 10.10.2013), Ռ.Հովասափյանի «Նախանվագներ» գրքի քննարկում (գրականության ամբիոն, 14.11.2013), Թ.Թադևոսյանի «Բանահյուսական արքետիպերի իմաստաբանական գուգահեռներ. ռուսական բիլինաներ և օսական նարթական էպոս» մենագրության քննարկում (ռուսաց լեզվի ամբիոն, 15.11.2013), նշվել է Խ.Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հրատարակության 155-ամյակը (գրականության ամբիոն, 01.11.2013): 2013թ. հոկտեմբերին «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրատուրայում Էրազմուս Մունդուս ծրագրի շրջանակներում 1 ամսով «Ռուսաց լեզուն գործնական ոլորտում» թեմայով դասախոսություններ է կարդացել Լեհաստանի Կրոսնոյի բարձրագույն դպրոցի աշխատակից Կարոլինա Գոլաբեկը: Ֆակուլտետը ակտիվորեն մասնակցում է նաև բուհական և միջբուհական բազմաթիվ գիտաժողովների, հոբելյանական միջոցառումների:

Դեկանատը և ֆակուլտետը սպասարկող ամբիոնները օգնում են ուսանողների ստեղծագործությունների տպագրությանը հանրապետական և տեղական մամուլում, կազմակերպում գիտական և գեղարվեստական գրքերի, թատերական ներկայացումների

քննարկումներ, հանդիպումներ գրողների, արվեստի աշխատողների հետ, այցելություններ պատկերասրահներ, Գավառագիտական թանգարան, Հ.Թումանյանի և Ստ.Զորյանի տուն-թանգարաններ: Կազմակերպվում են զեկուցումներ ինչպես ինստիտուտում, այնպես էլ նրանից դուրս՝ գրողների միությունում, գրադարաններում, դպրոցներում՝ նվիրված հայ գրականության դասականներին ու գրողներին:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնները մշտապես հանդես են գալիս որպես առաջատար կազմակերպություն՝ գիտական թեզերի պաշտպանության ընթացքում, ինչպես նաև ամբիոնների աշխատակիցները պարբերաբար դառնում են գիտական թեզերի պաշտպանությունների ընդդիմախոսներ (Գ.Խաչատրյան, Մ.Սանթրյան, Վ.Եղիազարյան, Վ.Փիլոյան, Հ.Այվազյան): Գ.Խաչատրյանը ընդգրկված է ՀՀ ԳԱԱ լեզվի, իսկ Վ.Եղիազարյանը ՀՀ ԳԱԱ գրականության՝ գիտական աստիճաններ շնորհող հանձնաժողովների կազմում:

Ֆակուլտետի ուսանողությունը ևս հաջողությունների է հասել: Բավարար մակարդակի վրա են ՈՒԳԸ աշխատանքները: Տասներկու ուսանողներ միջբուհական գիտական նստաշրջաններում ներկայացրել են իրենց աշխատանքները (Գրիշկյան Մելինե, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս (մագիստրատուրա, հեռակա), Ռամազյան Լիանա, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս (մագիստրատուրա, հեռակա), Վերոյան Գեղեցիկ, Ռուսաց լեզու և գրականություն, 2-րդ կուրս, Քոչարյան Լուսինե, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս, Չատինյան Անի, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս, Գասոյան Սրբուհի, Հայոց լեզու և գրականություն, 4-րդ կուրս, Հակոբջանյան Մարիամ, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս (մագիստրատուրա, հեռակա), Բաղդասարյան Հայարիփի, Հայոց լեզու և գրականություն, 1-ին կուրս (մագիստրատուրա), Դիլոյան Կարինե, ՎՊՄԻ, Հայոց լեզու և գրականություն, 2-րդ կուրս, Ամիրխանյան Ֆլորա - Հայոց լեզու և գրականություն, 4-րդ կուրս, Ամիրադյան Արփինե - Հայոց լեզու և գրականություն, 1-ին կուրս (մագիստրատուրա), Անի Այվազյան - Ռուսաց լեզու և գրականություն (մագիստրատուրա) 2-րդ կուրս:

2013-2014 ուստարում ֆակուլտետի՝ Շարժունության ծրագրին մասնակցելու նպատակով Էրազմուս Մունդուս փոխանակման ծրագրի IANUS և EMINENCE նախագծերի դրամաշնորհներ ստացած 6 ուսանողներ ուսանելու են մեկնել արտասահման («Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության առկա համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհիներ Մերրի Նալբանդյանը և Լուսինե Ղազարյանը, ինչպես նաև «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության հեռակա համակարգի 5-րդ կուրսի ուսանող Ալբերտ Դանիելյանը՝ Ռումինիայի Յասսի քաղաքի «Ալեքսանդրու Իոան Կուզա» համալսարան, իսկ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության առկա համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհիներ Աննա Վարդանյանը և Հասմիկ Մանվելյանը, ինչպես նաև նույն մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Ալինա Մեջլումյանը՝ Լեհաստանի Պոզնան քաղաքի «Ադամ Միցկևիչ» համալսարան):

Նույն ծրագրով 2014-2015 ուստարում արտասահմանյան տարբեր երկրներ ուսանելու կմեկնեն ֆակուլտետի 9 ուսանողներ, իսկ Լեհաստանից 1 ուսանող կհյուրընկալվի մեր ֆակուլտետում՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության մագիստրատուրայում սովորելու:

Ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվել են նախարարությունից ստացված նախագծեր, ռեկտորատի և ինստիտուտի խորհրդի կողմից տրված հանձնարարություններ և ֆակուլտետի գիտաուսումնամեթոդական աշխատանքներին վերաբերող

հարցեր: Ժամանակին քննարկվում և հաստատվում են մասնագիտական և կամրնտրական առարկաների թեմաներն ու ուսումնական ծրագրերը: Նշեմ, որ հատկապես մասնագիտական և կամրնտրական առարկաների թեմաները քննարկելիս հաշվի են առնվում ուսանողների նախասիրությունները:

Կազմվել, քննարկվել և հաստատման են ներկայացվել համալսարանական ծրագրով նոր ուսումնական պլանները:

Լոռու մարզպետարանի, Վանաձորի քաղաքապետարանի և ինստիտուտի սահմանած անվանական կրթաթոշակներ են ստացել և շարունակում են ստանալ ֆակուլտետի տասնյակ ուսանողներ:

Ռուսաց լեզվի ամբիոնի ամենամյա միջոցառումներից կարելի է հիշատակել մասնակցությունը «Մոսկվայի տան» կազմակերպած կոնֆերանսներին, «Քաղաքական կրթություն», «Ժողովրդավարություն» թեմաներով հանձնարարվող ռեֆերատներն ու դրանց քննարկումները, ամենամյա գիտական կոնֆերանս՝ նվիրված գենդերային հիմնախնդիրներին: Ռուսական բաժնի լավագույն ուսանողները արժանանում են Մոսկվայի քաղաքապետի անվանական կրթաթոշակին:

Ռուսական Բարեկենդանին նվիրված ամենամյա միջոցառում է կազմակերպում ռուսաց լեզվի ամբիոնը:

Օտար լեզուների ամբիոնը ամեն տարի կազմակերպում է «Halloween»-ին նվիրված միջոցառում:

Անշուշտ, ֆակուլտետն այդ հաջողություններից գլխապտույտների մեջ չէ. քաջ գիտակցում ենք նաև որոշ թերություններ.

1. դեռևս կայացած չպետք է համարել խորհրդատուների ինստիտուտը: Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Հատկապես պետք է կարևորել խորհրդատուների դերը հեռակա ուսուցման համակարգում:

2. Ամբիոնները ավելի հետևողական պիտի լինեն դասախոսական տեքստերի և հարցաշարերի վերանայման և թարմացման, դրանց համապատասխանության հարցերում: Չնայած այս ուղղությամբ առաջընթացն ակնառու է, սակայն թերություններ և բացթողումներ դեռ կան:

3. 412 լսարանը նախատեսված է որպես լինգվաֆոնային կաբինետ, սակայն դեռևս այն լիովին չի ծառայում իր նպատակին՝ համապատասխան սարքավորումների մի մասի բացակայության պատճառով:

Հասկանալի է, որ անելիքներ շատ կան, և մեր կոլեկտիվն անում է ու կանի հնարավորինս՝ գիտաուսումնամեթոդական աշխատանքները բավարար մակարդակի վրա պահելու ուղղությամբ:

Առաջարկեցին – Հաղորդումն ընդունել ի գիտություն, քննարկել առաջարկությունները, դիտողությունները:

Քվեարկություն – կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշեցին - Հաղորդումն ընդունել ի գիտություն, քննարկել առաջարկությունները, դիտողությունները:

1. 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում:

Լսեցին դեկան Ա. Պողոսյանի՝ 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի աշխատանքային պլանը.

<i>ԻՎ</i>	<i>Աշխատանքի բովանդակությունը</i>	<i>Ժամկետները</i>	<i>Գործառույթներ</i>	<i>պատասխանատու</i>	<i>ինդիկատոր/ցուցիչ</i>
1	Ֆակուլտետի 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկում, հաստատում: Ավարտական քննությունների հարցաշարերի քննարկում, հաստատում: Ամբիոնների աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:	սեպտեմբեր		դեկան, ամբիոնների վարիչներ	արձանագրություն
2	Դասախոսների օրացուցային պլանների հաստատում:	սեպտեմբեր		ամբիոնների վարիչներ	
3	Գիտահետազոտական պլանների քննարկում և հաստատում:	սեպտեմբեր		ամբիոնների վարիչներ	
4	4-րդ կուրսերի արտադրական պրակտիկայի կազմակերպում և ընթացքի վերահսկում:	սեպտեմբեր-հոկտեմբեր		դեկան, պրակտիկայի ղեկավար, ամբիոնների վարիչներ	արձանագրություններ
5	Ինքնուրույն աշխատանքների կազմակերպման վիճակը ֆակուլտետում	հոկտեմբեր		դեկան, ամբիոնների վարիչներ	
6	Համակարգչային ստուգումով ավարտվող նոր առարկաների ընդգրկում, դրանց հարցաշարերի կազմում և համակարգչային մուտքագրում:	հոկտեմբեր-նոյեմբեր		ամբիոնների վարիչներ	
7	Առաջին կիսամյակի միջանկյալ քննությունների գրաֆիկների կազմում և հաստատում	հոկտեմբեր		դեկան	

8	Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվություններ	նոյեմբեր-դեկտեմբեր		ամբիոնների վարիչներ	արձանագրություններ
9	Հեռակա համակարգի ստուգողական աշխատանքների թեմատիկայի, մեթոդական ցուցումների բարեփոխում, թեմաների կատարման նախապատրաստում և ընթացքի վերահսկում:	սեպտեմբեր-դեկտեմբեր		դեկան, ամբիոնների վարիչներ, դասախոսներ	
1	Դեկանատի նիստեր	յուրաքանչյուր շաբաթ 1-ական անգամ			արձանագրություններ
1	Խորհրդակցություններ ակադեմիական խմբերի ղեկավարների հետ	յուրաքանչյուր ամիս 2-ական անգամ		դեկան	
<i>իվ</i>	<i>Աշխատանքի բովանդակությունը</i>	<i>Ժամկետները</i>	<i>Պրծառույթներ</i>	<i>պատասխանատու</i>	<i>ինդիկատոր/ցուցիչ</i>
1	Դպրոց-ինստիտուտ փոխադարձ կապին վերաբերող միջոցառումներ:	սեպտեմբեր-դեկտեմբեր		ամբիոնների վարիչներ	
1	Կուրսային աշխատանքների թեմաների քննարկում:	հոկտեմբեր		դեկան, ամբ. վարիչներ	
1	Ընթացիկ քննությունների, ստուգումների և ձմեռային քննաշրջանի նախապատրաստում. ա) հարցաշարերի և դասախոսական տեքստերի համապատասխանության ստուգում: բ) հարցատոմսերի հաստատում գ) նախաքննական պարապմունքների գրաֆիկի կազմում:	սեպտեմբեր-դեկտեմբեր սեպտեմբեր-հոկտեմբեր հոկտեմբեր հոկտեմբեր սեպտեմբեր		դեկան, ամբիոնների վարիչներ, դասախոսներ	
1	ՈՒԳԸ-ի աշխատանքների կազմակերպում:	նոյեմբեր-դեկտեմբեր		ՈՒԳԸ աշխատանքներ	

		Բ		Ի դեկավար	
1	Հաղորդում ուսանողների հետ տարվող անհատական աշխատանքների վերաբերյալ:	հոկտեմբեր-նոյեմբեր		ամբիոնների վարիչներ	
1	Առկա և հեռակա համակարգերի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի վերափոխում, առկա և հեռակա համակարգերի համալսարանական ուսումնական պլանների կազմում:	սեպտեմբեր-հոկտեմբեր		դեկան	
1	Մագիստրատուրայի հեռակա համակարգի պետական քննության նախապատրաստում և կազմակերպում:	դեկտեմբեր-մարտ		դեկան, հայոց լեզվի, գրականության ամբիոնների վարիչներ	

Առաջարկեցին – Հաղորդումն ընդունել ի գիտություն, քննարկել առաջարկությունները, դիտողությունները:

Քվեարկություն – կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշեցին - Հաղորդումն ընդունել ի գիտություն, քննարկել առաջարկությունները, դիտողությունները:

2. Ընթացիկ հարցեր:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.Ժ.ՊՈՂՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Լ.Հ. Պետրոսյան

ՆԻՍՏ

Նիստին մասնակցում էին գիտամեթոդական խորհրդի 11 անդամներից 11-ը և ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

1. 2014-2015 ուստարվա արտադրական (մանկավարժական) պրակտիկաների ծրագրերի հաստատում:
2. Ինքնուրույն աշխատանքների դրվածքը ֆակուլտետում:
3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին - 2014-2015 ուստարվա արտադրական (մանկավարժական) պրակտիկաների ծրագրերի հաստատումը: «Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն» և «Անգլերեն լեզու» մասնագիտությունների մանկավարժական պրակտիկայի աշխատանքների նախապատրաստման վերաբերյալ ելույթ ունեցան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ Դ. Գյուլգադյանը, ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս Կ.Գրիգորյանը և օտար լեզուների ամբիոնի դասախոս Ա.Առաքելյանը: Նրանք նշեցին, որ ուսանողների հետ բավարար նախապատրաստական աշխատանքներ են տարվել, և համոզմունք հայտնեցին, որ մանկավարժական պրակտիկան այս տարի ևս կանցնի հաջող: Ներկայացվեցին նաև մանկավարժական պրակտիկայի ծրագրերը:

Առաջարկեցին – Հավանություն տալ կատարված աշխատանքներին, հաստատել ծրագրերը:

Քվեարկություն – կողմ` 11, դեմ` 0, ձեռնպահ` 0:

Որոշեցին - Հավանություն տալ կատարված աշխատանքներին, հաստատել ծրագրերը:

2.Ինքնուրույն աշխատանքների դրվածքը ֆակուլտետում ներկայացվեց ամբիոնի վարիչների կողմից.

ա. Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Հ.Հարությունյան - Վերջին շրջանում դասավանդման և գնահատման նոր մեթոդաբանության անցելու հետ կապված ուսումնական ծրագրերում հատկապես կարևորում է ուսանողների ինքնուրույն աշխատանքների դերը և նրանց ներկայացվող պահանջները: Ինքնուրույն աշխատանքների նպատակն է նպաստել սովորողների վերլուծական ունակությունների և հմտությունների ձևավորմանը, դասավանդվող առարկաների ծրագրային պահանջների լիակատար յուրացմանն ու մասնագիտական կարողությունների զարգացմանը: Ելնելով վերը նշվածից և հաշվի առնելով այն, որ ուսանողների ինքնուրույն աշխատանքի ձևերը որոշվում են ուսումնական առարկայի բովանդակությամբ և ըստ այդմ կարող են լինել ուսումնական կամ ուսումնահետազոտական բնույթի` հայոց լեզվի ամբիոնը որոշում է.

1. Հանձնարարել մշակումներ այն թեմաներից, որոնք դասախոսություններին հատկացված դասաժամերի սահմաններում չեն ներկայացվում:

2. Հանձնարարել լեզվական խնդիրներին վերաբերող հրապարակումների լուսաբանում՝ հատկապես բարձր կուրսերի և մագիստրատուրայի ուսանողներին:
3. Որոշ առարկաներից (օր.՝ բարբառագիտություն, հանրալեզվաբանություն, նշանագիտություն) հանձնարարել կենդանի խոսքի նմուշների, տարբերակային ձևերի, անվանակարգային համակարգերի լեզվական նյութի հավաքման, դասակարգման և վերլուծության աշխատանքներ՝ դասախոսի ղեկավարությամբ:
4. **Թարգմանչական գործ** և **Լրագրության** բաժնի ուսանողներին հանձնարարել անհատական կամ խմբային ինքնուրույն աշխատանք՝ կապված հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի լեզվի առանձնահատկությունների ուսումնասիրության հետ:
5. Հաշվի առնելով նորագույն տեխնոլոգիաների դերը ժամանակակից կրթական համակարգում՝ որոշ թեմաներ ամփոփելուց հետո ուսանողներին հանձնարարել ինքնուրույն խմբային աշխատանքներ շնորհանդեսների (պրեզենտացիա՝ power point, movie maker և այլ ծրագրերով) տեսքով:

Նշված աշխատանքները ժամանակին և խորությամբ կատարելու համար ամբիոնը գիտական կաբինետի, գրադարանի և լեզվի կաբինետի աջակցությամբ պետք է ապահովի ուսանողներին դասավանդվող առարկաների դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, համապատասխան նյութերով՝ համաձայն պետական կրթական չափորոշիչների:

Ինքնուրույն աշխատանքների ընթացքը վերահսկելու և ուսանողներին անհրաժեշտ մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով ամբիոնում սահմանել խորհրդատվության օերը՝ յուրաքանչյուր շաբաթվա 2-րդ և 5-րդ օրերին:

բ. Գրականության ամբիոնի վարիչ Վ. Փիլոյան - Հայտնում ենք, որ «գրականություն» առարկայից ինքնուրույն, անհատական աշխատանքների և սեմինար պարապմունքների ձևը հաստատվել է ֆակուլտետի և ինստիտուտի խորհուրդներում: Գրականության ամբիոնում ուսանողների ինքնուրույն և անհատական աշխատանքները հիմնականում կազմակերպվում և անցկացվում են գրական երկերի, այդ երկերի ասելիքի, կերպարային համակարգի, պոտիկական յուրահատկությունների բացահայտմանն ուղղված վերլուծությունների, ինչպես նաև ծրագրային գրքերի, բնագրային և ինտերնետային համապատասխան սկզբնաղբյուրների մշակման միջոցով: Ձևն իրեն արդարացնում է, ուսանողները շատ ակտիվ են, և ամբիոնում պահպանվում են ուսանողների լավագույն ինքնուրույն աշխատանքներից:

Հանձնարարվում են նաև ծրագրային հեղինակների ստեղծագործություններից անգիրներ:

գ. Ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Կ. Առուստամյան Ուսանողների պլանավորվող աշխատանքների ձևերից մեկը ինքնուրույն աշխատանքն է, որը իրականացվում է դասախոսի մեթոդական ղեկավարությամբ՝ որոշակի ուսումնական արդյունքների հասնելու նպատակով: Տվյալ աշխատանքը ընթանում է դասախոս-ուսանող համագործակցության ներքո: Ուսանողը ստանում է ցուցումներ, առաջադրանքներ ինքնուրույն աշխատանքի համար, իսկ դասախոսը ղեկավարում է նրա աշխատանքը, ստուգում և կատարում ուղղումներ: Լսարանային և արտալսարանային ինքնուրույն աշխատանքները միտված են ուսանողների մոտ զարգացնելու հետևյալ որակները. հատուկ գրականության, տեղեկատուների, պարբերականների, արդի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հետ աշխատելու կարողություններ, կազմակերպվածություն, նախաձեռնություն, ակտիվություն:

Ռուսաց լեզվի ամբիոնում արտալսարանային ինքնուրույն աշխատանքները կազմակերպվում են հետևյալ ձևով.

1. Տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների յուրացում, համապատասխան նյութերի որոնում համացանցում և վերամշակում,
2. Մասնագիտական գրականության մշակում,
3. Մախապատրաստում գործնական պարապմունքներին,
4. Նախապատրաստում թեստավորման, ստուգողական աշխատանքներին,
5. Նախապատրաստում ուսանողական հոդվածների, թեզերի, էսսեների,
6. Նախապատրաստում գործարարական և դերային խաղերի,
7. Կուրսային և ավարտական աշխատանքների կատարում,
8. Նախապատրաստում պրոյեկտների,
9. Օլիմպիադաների անցկացում,
10. Պրակտիկայի հաշվետվությունների ամփոփում,
11. Միջբուհական և մասնագիտական ուղղվածությամբ միջոցառումների անցկացում,
12. Մասնակցություն ՈԻԳԸ աշխատանքներին:

Ռուսաց լեզվի ամբիոնը լսարանային ինքնուրույն աշխատանքների ընթացքում իրականացնում է հետևյալ ձևերը.

1. Մասնագիտական տեքստերի թարգմանություն,
2. Մասնագիտական տեքստերի կոնսպեկտավորում ըստ տրված պլանի,
3. Մասնագիտական տերմինաբանական բառարանի կազմում և համալրում,

4. Մասնագիտական թեմաների շուրջ բանավեճերի կազմակերպում, դերային խաղերի անցկացում,
5. Մասնագիտական տեքստերի վերլուծություն ըստ տրված կադապարների,
6. Բանավոր հաղորդումների նախապատրաստում, ներկայացում և քննարկում,
7. Խմբային աշխատանքների կազմակերպում,
8. Մասնագիտական թեմաներով տեսանյութերի դիտում և քննարկում/թարգմանություն,
9. Մասնագիտական տեքստերի կազմում ըստ տրված պլանի / նախաբանի,
10. Գրավոր և բանավոր թեստային ստուգիչ աշխատանքների անցկացում:

դ. Անգլերենի ամբիոնի վարիչ Ս. Սարգսյան - Ամբիոնը ներկայացնում է ամբիոնի կողմից կատարվող ինքնուրույն աշխատանքի հետևյալ ձևերը.

- ուսանողներին տրվում են շարադրություններ տարբեր թեմաներով
- տրվում են թարգմանություններ գեղարվեստական գրականությունից, թերթերից, լրագրերից և մասնագիտական տեքստերից
- այցելում են տարբեր մշակութային օջախներ և գրում են փոքր շարադրություններ (essays) տպավորությունների հիման վրա
- հանձնարարվում են անհատական ընթերցանություններ
- դասընթացում առանձնացվում են որոշակի թեմաներ ինքնուրույն աշխատանքի համար
- պատրաստվում և բանավոր ձևով են ներկայացվում դասավանդվող առարկաներին վերաբերող համակողմանի թեմատիկ նյութեր
- կազմակերպվում են բաց դասեր ուսանողների կողմից դասախոսների ղեկավարությամբ:

2. Ընթացիկ հարցեր:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Լ.Հ. Պետրոսյան

Ա.Ժ.ՊՈՂՈՍՅԱՆ

ՆԻՍՏ

Նիստին մասնակցում էին գիտամեթոդական խորհրդի 11 անդամներից 11-ը և ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Օրակարգ - 1. 2013-2014 ուստարվա 2-րդ կիսամյակի պարտքերի մարման ամփոփում:

2.Ընթացիկ հարցեր:

1. Դեկան Ա.Պողոսյանը ներկայացրեց պարտքերի մարման ընթացքը, և դրանց ավարտից հետո ստեղծված իրավիճակը.

Մասնագիտություն	Կուրսը	Առարկա	Դասախոս	կրեդիտ	Պարտք ունեցող ուսանող, թիվը	Չեն ներկայացրել պարտքերի մասում	Գրական են ստացել	«Անբավարար» են ստացել	Պարտք ունեն
									Ուսանողի անուն, ազգանուն
Հայոց լեզու և գրակ.	1	Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն)	Շահվերդյան Թ.	3	1	0	1	0	
Հայոց լեզու և գրակ.	3	Ժամանակակից հայոց լեզու (Ձևաբանություն 2)	Մանթոյան Ա. Մելքոնյան Հ.	5	5	1	1	3	Հակոբյան Արմենուհի Մեջլումյան Ինեսա Երանոսյան Թեհմին Սանուկյան Կիմա
		Հայ գրականության դասավանդման մեթոդիկա	Եղիազարյան Վ.	4	2	0	2	0	
		Գրական հայոց լեզվի պատմություն	Շահվերդյան Թ.	3	11	1	5	5	Բադալյան Լիլիթ Համբարձումյան Սիրարփի Մեջլումյան Ինեսա Սահակյան Վեներա Երանոսյան Թեհմինե Սանուկյան Կիմա
		Կուրսային աշխատանք		3	6	1	5	0	Մեջլումյան Ինեսա
		Սարմնակրթություն	Բարսեղյան Ս.	0	1	1	0	0	Մեջլումյան Ինեսա
		Հայ գրականության պատմություն (20-րդ դարասկիզբ)	Այվազյան Հ.	5	10	0	10	0	
Ռուսաց լեզու և գրակ	1	Ժամանակակից ռուսաց լեզու (Հնչյունաբանություն)	Առուստամյան Կ.	3	1	1	0	0	Սաֆարյան Միլենա
		Ռուս գրականության պատմություն (Հին)	Միմոնյան Ա.	4	1	0	1	0	
		Ռուս ժող. բանահյուսություն	Միմոնյան Ա.	5	1	0	1	0	
		Լեզվաբանության հիմունքներ	Առուստամյան Կ.	5	2	1	1	0	Սաֆարյան Միլենա
		Հայոց պատմություն	Մելիքյան Ա.	2	1	0	1	0	

<i>Ռուսաց լեզու և գրակ</i>	2	Հոգեբանություն	Միրզոյան Վ.	5	1	0	1	0	
<i>Ռուսաց լեզու և գրակ</i>	3	Փիլիսոփայություն	Հովհաննիսյան Ս.	4	2	0	2	0	
<i>Թարգմանչական գործ</i>	3	Երկրորդ օտար լեզու (Ֆրանսերեն)	Մուսայելյան Թ.	2	1	1	0	0	Ասլանյան Լիլիա
		Ժամանակակից հայոց լեզու	Ավագիմյան Ա.	2	1	1	0	0	Ասլանյան Լիլիա
		Փիլիսոփայություն	Ալավերդյան Է.	4	2	0	2	0	
		Կ/դ (Մշակութաբանություն)	Ստեփանյան Ն.	2	1	0	1	0	
<i>Ռուսաց լեզու և գրակ (մագիստրատուրա)</i>	1	Բառագիտության արդի հիմնահարցեր	Առուստամյան Կ.	5	1	0	1	0	
		Գրականագիտական և գեղագիտական կատեգորիաներ	Մալումյան Գ.	5	1	0	1	0	
		Բարձրագույն դպրոցի դասավանդման մեթոդիկա	Ալոյան Ժ.	4	1	0	1	0	
<i>Ռուսաց լեզու և գրակ (մագիստրատուրա)</i>	2	Տեքստի բանասիրական վերլուծություն	Բաբայան Ս.	3	1	0	1	0	
		Ընդհանուր լեզվաբանություն	Առուստամյան Կ.	5	1	0	1	0	
		Կ/դ (Մլավոնական տեքստերի լեզուն)	Թադևոսյան Թ.	3	1	0	1	0	
		20-րդ դարի ռուս բանաստեղծուհիներ	Ղազարյան Ք.	3	1	0	1	0	
		Շարահյուսության արդիական հիմնահարցեր	Բաբայան Ս.	3	1	0	1	0	
		Մոդեռնը ռուս գրականության մեջ	Թադևոսյան Թ.	3	1	0	1	0	
Ընդամենը ֆակուլտետում					59	8	43	8	

Դեկանը ամբիոնների վարիչներին հանձնարարեց դեռևս պարքս ունեցող ուսանողների հետ կազմակերպել անհատական պարապմենքներ, գրաֆիկը ներկայացնել դեկանատ:

Առաջարկեցին – Արդյունքները հաստատել:

Քվեարկություն – կողմ` 11, դեմ` 0, ձեռնպահ` 0:

Որոշեցին – Արդյունքները հաստատել:

2.Ընթացիկ հարցեր:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Ժ.ՊՈՂՈՍՅԱՆ
Լ.Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

*ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ 20.11.2014թ.
ՆԻՍՏԻ*

Նիստին մասնակցում էին գիտամեթոդական խորհրդի 11 անդամներից 11-ը և ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Օրակարգ - 1. Օտար լեզուների ամբիոնի վարիչի հնգամյա գործունեության հաշվետվություն: Ջեկուցող՝ օտար լեզուների ամբիոնի վարիչ Ս. Սարգսյան:

2. Ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում: Ջեկուցող՝ դեկան Ա. Պողոսյան:

3. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** օտար լեզուների ամբիոնի վարիչի հնգամյա գործունեության հաշվետվությունը:

Ս.Սարգսյան - Օտար լեզուների ամբիոնի հնգամյա աշխատանքային գործունեության հաշվետվության համար հիմք են ծառայել գործունեության կրթական, գիտահետազոտական և ուսումնամեթոդական բնագավառները, որոնք արտացոլում են բուհի առաքելությունը, տեսլականը և նպատակային կողմնորոշիչները.

Կրթական բաժին

ՎՊՀ կանոնակարգի համաձայն ինստիտուտի ղեկավարության հետ համատեղ վերանայվել է «Անգլերեն լեզու և գրականություն» լեզվաբանության բակալավրի որակավորման աստիճանի համար նախատեսված ուսումնական պլանը, և նրանում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. Վերանայվել են ներքոհիշյալ ընդհանուր մասնագիտական առարկաների վերնագրերը, և դրանք համատեղվել են մեկ ընդհանուր կառուցամասի ներքո՝ «Թարգմանության լեզվաոճական առանձնահատկությունները»:

- Մասնագիտական առարկա թարգմանության տեսությունից
- Թարգմանության մասնագիտական կողմնորոշում
- Թարգմանության ոճական առանձնահատկությունները

2. Վերանայվել է մի շարք մասնագիտական առարկաների դասավանդման ժամաքանակի և ստուգման ձևի նկատմամբ կիրառվող մոտեցումը՝ ելնելով այդ առարկաների հրատապությունից ու կարևորությունից (առանձին պլանով):

4. Պետական չափորոշիչներից և ժամանակակից լեզվաբանական գիտության հայեցակարգից ելնելով՝ ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի քննարկմանը ներկայացվել է մասնագիտական մի շարք նոր առարկաների դասավանդման հարցը (առանձին պլանով):

5. Վերանայվել է բակալավրի որակավորման համար նախատեսված ուսումնական պլանը, և նրանում ներառվել են հետևյալ դասընթացները.

ա) Բնագրի լեզվաբանական վերլուծություն (թարգմ.)

բ) Հաջորդական թարգմանություն (թարգմ.)

գ) Մասնագիտական ներածություն (թարգմ.)

դ) Հաղորդակցության մշակույթ (թարգմ.)

ե) Գրավոր խոսքի հմտություններ (անգլ.)

զ) Գրավոր խոսքի ռազմավարություն (անգլ.)

է) Թարգմանության քերականական առանձնահատկությունները (թարգմ.)

ը) Ճանաչողական ռճաբանություն (թարգմ.)

թ) Թարգմանության լեզվառճական առանձնահատկությունները (թարգմ.)

ժ) Գիտական տեքստերի թարգմանություն (թարգմ.)

ի) Բնագրի և թարգմանվածքի զուգադրական լեզվաբանական վերլուծություն (թարգմ.)

լ) Արտասահմանյան գրականության պատմություն (անգլալեզու գրականություն) (անգլ.)

«Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի ուսանողների համար համապատասխան կրթական ծրագրով կազմակերպվել է ֆրանսերենի խորացված ուսուցում, որի արդյունքում ուսանողները հանձնել են պետական քննություն և ստացել են համապատասխան վկայականներ:

6. Վերանայվել է մագիստրոսի աստիճան ունեցող մասնագետի որակավորման համար նախատեսված ուսումնական պլանը, և նրանում ներառվել են հետևյալ դասընթացները.

ա) Ակադեմիական գրագիտություն

բ) Դարձվածաբանական արտահայտությունների ծագումն ու ստուգաբանությունը

գ) Անտիուտոպիան 20-րդ դարի առաջին կեսի անգլիական գրականության մեջ

դ) Մամուլի լեզու

7. Մագիստրոսի հիմնական կրթական ծրագրում վերանայվել են դասավանդվող դասընթացների վերնագրերը՝ դասընթացների բովանդակային նմանությունից խուսափելու նպատակով:

8. Վերանայվել և թարմացվել է մագիստրոսական կրթական գործող ծրագիրը՝ ելնելով Բոլոնիայի հռչակագրի դրույթներից, ավագ դպրոցի ուսումնական ծրագրերից և պետական չափորոշիչներից:

9. Կազմակերպվել է ընդհանուր և հատուկ մասնագիտական առարկաների ուսումնական պլանների, ծրագրերի, սեմինար պարապմունքների թեմատիկայի տպագրություն:

10. Կրթական ծրագրերի համաձայն անցկացվել են ընթացիկ և ամփոփիչ բոլոր ատեստացիաները (քննություններ, ստուգաբքներ, ավարտական աշխատանքների պաշտպանություն և այլն): Այդ աշխատանքների որակի բարձրացման նպատակով՝

ա/ անցկացվել են մասնագիտական առարկաներից ընթացիկ քննություններ նաև թեստային տարբերակով: Կազմվել են համապատասխան թեստեր, դրանք քննարկվել և հաստատվել են ամբիոնի նիստերում,

բ/ ներկայացվել են գիտական աշխատանքի կատարման չափորոշիչներ, որի արդյունքում բարձրացել է ամբիոնի աշխատակիցների և ուսանողների տեղեկացվածությունը դիպլոմային և ավարտական աշխատանքների որակի բարձրացման ուղղությամբ,

գ/ վերանայվել է ստուգողական, կուրսային, դիպլոմային և ավարտական աշխատանքների դրվածքն ամբիոնում՝ բացառելով այդ աշխատանքների թեմատիկայի կրկնվելն ու կաղապարային բնույթը: Հատկապես դիպլոմային և ավարտական աշխատանքներն ընտրվել են բացառապես մեթոդական և կիրառական նշանակություն ունեցող հրատապ թեմաներից, որոնք մինչև ժամանակ ենթադրում են որոշակի ինքնուրույն վերլուծություն: Թեմաներն ընդգրկվել են՝ ելնելով ամբիոնի գիտահետազոտական թեմայից:

11. Իրականացվել է ամբիոնի աշխատակիցների կրթական, գիտական, մեթոդական և այլ աշխատանքների անհատական պլանների քննարկում՝ նախապես կազմված գրաֆիկի համապատասխան:

12. Ռեկտոր Գ.Խաչատրյանի, պրոռեկտոր Ս.Թումանյանի և դեկան Ա.Պողոսյանի աջակցությամբ ստեղծվել է լեզուների կաբինետ, որը նպաստում է գործունեության ակտիվացմանը՝ կրթական և մեթոդական աշխատանքների ուղղությամբ: Կաբինետի գրական ֆոնդը պարբերաբար հարստացվել է գիտական գրականությամբ և ժամանակակից տեխնոլոգիաներով:

13. Դասախոսությունների, սեմինարների և գործնական պարապմունքների ժամանակ կիրառվել են ժամանակակից տեխնոլոգիաներ:

Գիտահետազոտական բաժին

1. Որոշվել է ամբիոնի գիտական նոր ուղղվածությունը՝ ելնելով աշխատակիցների գիտական ուսումնասիրությունների ուղղվածությունից, նախասիրություններից, հակումներից և ժամանակակից լեզվաբանության հրատապ խնդիրներից: Գիտահետազոտական թեման խթան է հանդիսացել նաև նոր դասընթացների ներդրման համար՝ «Թարգմանության լեզվաոճական առանձնահատկությունները» և «Մամուլի լեզուն»:

2. Օտար լեզուների ամբիոնում շարունակվում են գիտահետազոտական թեմայի շուրջ տարվող ուսումնասիրությունները: Ամբիոնը մտադիր է ընդլայնել ուսումնասիրվող բնագավառները:

3. 2009-2014թթ. ամբիոնի գիտահետազոտական թեմայի վերաբերյալ տպագրվել է շուրջ 55 հոդված, 3 ուսումնամեթոդական ձեռնարկ և երկու գիրք:

4. Ամբիոնի դասախոսներ Ս. Սարգսյանը, Ա. Պետրոսյանը, Ա. Եղյանը, Լ. Սարուխանյանը և Ա. Ալոյանը մասնակցել են գիտական կոնֆերանսների և վեբինարների (օնլայն սեմինարների), ինչը մեծ խթան է հանդիսացել օտարերկրյա մասնագետների և ամբիոնի դասախոսների փորձի փոխանակմանը:

5. Գիտական համագործակցության կապեր են հաստատվել հանրապետության և արտերկրի բուհերի համապատասխան ամբիոնների հետ: ԵՊՀ-ի հետ սերտ համագործակցության արդյունքում հրավիրվել է ԵՊՀ-ի դասախոս, բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Սեֆերյանը, ում ղեկավարությամբ պաշտպանվել են մագիստրատուրայի 2 և բակալավրիատի 2 ավարտաճառեր:

6. Իրականացվել է գիտական աշխատանքների, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական գրականության, ընդհանուր և հատուկ դասընթացների՝ պետական չափորոշիչներին համապատասխան մշակում, ինչպես նաև այս կարգի աշխատանքների գրախոսում:

7. Քննարկվել են ամբիոնի աշխատակիցների կրթական, գիտահետազոտական, մեթոդական աշխատանքների անհատական պլաններ:

8. Պարբերաբար քննարկվել և թարմացվել են ամբիոնի աշխատակիցների դասախոսական տեքստերը՝ ժամանակակից լեզվաբանության պահանջներին համապատասխան:

9. Իրականացվել է բակալավրական և մագիստրոսական կրթության համար դասախոսությունների տեքստերի կազմում՝ հիմնված նախատեսվող նոր ընդհանուր մասնագիտական առարկաների ու դասընթացների թեմատիկայի վրա:

10. Նախորդ հինգ տարիների ընթացքում կազմակերպվել է մեկ հանրապետական գիտական կոնֆերանս, որին մասնակցել են Հայաստանի առաջավոր բուհերի դասախոսներ:

11. Կազմակերպվել են բանավեճեր ամբիոնի դասախոսների և ուսանողների միջև:

12. Պարբերաբար անցկացվել են գիտամեթոդական սեմինարներ:

13. Ապահովվել է ֆակուլտետի ուսանողների մասնակցությունը ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին, կազմակերպվել են ֆակուլտետի ՈԻԳԸ ժողովներ, սեմինարներ:

14. Իրականացվել է ուսանողական գիտահետազոտական գործունեության խրախուսում՝ լավագույն ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում, գիտաժողովներում ու սեմինարներում ընդգրկելու միջոցով: Մագիստրատուրայի ուսանողներ Մանե Ֆիդանյանը, Էլզա Սահակյանը, Հասմիկ Չատինյանը, Ամալյա Մարտիրոսյանը, Հեղինե Սովսեսյանը, Անժելա Ղազարյանը, Ռուզաննա Աբովյանը և Նարինե Հակոբյանը մասնակցել են ուսանողական հանրապետական 6 գիտաժողովների՝ հանդես գալով իրենց թեզերի թեմաների շրջանակներում կատարված ուսումնասիրություններով:

15. Լավագույն ուսանողական աշխատանքների թեզիսները հրատարակվել են:

16. Ստեղծվել է ուսանողների կողմից կատարված արժեքավոր ուսումնասիրությունների և ստեղծագործական աշխատանքների բանկ:

17. Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի 6 դասախոսների շնորհիվ է բ.գ.թ.-ի, 2-ին՝ մ.գ.թ.-ի, 2-ին՝ դոցենտի կոչում:

18. Ամբիոնը առաջատար կազմակերպություն է հանդիսացել թվով 15 ատենախոսությունների համար:

Ուսումնամեթոդական բաժին

1. Առաջին կուրսեցիների համար կազմակերպվել է խորհրդատվություն դասախոսությունների սղագրման, հանձնարարված գրականության մշակման, սեմինար պարապմունքի նախապատրաստման, գրադարանային ֆոնդի կիրառման, ստուգողական, միջանկյալ գրավոր քննության, կուրսային աշխատանքների կազմակերմման թեմաներով:

Ամբիոնի կողմից մեծ ուղարություն է դարձվել ինքնուրույն աշխատանքների կազմակերպմանը, որոնք ընդգրկում են հետևյալ տեսակները.

- ուսանողներին տրվել են ռեֆերատներ տարբեր թեմաներով,
- ուսանողներին տրվել են թարգմանություններ գեղարվեստական գրականությունից, թերթերից և լրագրերից,

- ուսանողներն այցելել են տարբեր մշակութային օջախներ և գրել են շարադրություններ տպավորությունների հիման վրա,
- ուսանողներին հանձնարարվել են անհատական ընթերցանություններ:

2. Ավարտական կուրսեցիների համար կազմակերպվել է խորհրդատվություն դիպլոմային և ավարտական աշխատանքների թեմայի ընտրության ու դրանց շարադրման ուղղությամբ:

3. Ամբիոնի նիստերում սահմանված ժամանակացույցի համաձայն քննարկվել է դիպլոմային և ավարտական աշխատանքների շարադրման ընթացքը, ուսանողներին ցուցաբերվել է համապատասխան մեթոդական օգնություն:

